Digitally signed by
MNATSAKANYAN ARTUR 2307960643
Date: 12.06.2025 15:24:45

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 19-05-2025 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 3/8
1.3 Պետական գրանցման համարը		222.160.930235
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-10-10
1.5 ՀՎՀՀ-ն		02653919
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10594050
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://www.cld.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		legislativecenter@moj.am / info@cld.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Տիգրան Դադունց		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	64	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը	264,437,033
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Աջակցություն «Օրենսդրության զարգացման կենտրոն» ծրագիր	62,870,594
	Մնանկության գործերով կառավարիչների վերապատրաստում	1,400,752

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Արդարադատության նախարարության համար կամ նախարարության պահանջով՝ այլ մարմինների կարիքների համար օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարական փաստաթղթերի և այլ ակտերի նախագծերի մշակում, մասնակցության մշակմանը, վերլուծություն կամ փորձաքննություն	259,093,854	
Իրավական ակտերի մշակում, ոլորտային նախարարությունների, Հիմնադրամի թիմի կարողությունների զարգացում, վերապատրաստումների, դասընթացների կազմակերպում, խորհրդատվությունների տրամադրում, գնահատման և ուսուցման կարողությունների զարգացում, մշակվող իրավ ակտերի վերաբերյալ քննարկումների, միջ կազմակերպում	49,023,351	
Վերապատրաստման դասընթացների մատուցում	792,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	308,909,205	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	308,909,205	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 29 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

2025 թվականի մայիսի 19-ի թիվ N 4-Լ

«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը *որոշում է.*

1. Հաստատել «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի 2024 թվականի գործունեության մասին հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ

2025թ. մայիսի 19
Երևան

Հավելված
«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 2025 թ. մայիսի 19-ի թիվ 4-Լ որոշման

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2025 թ. մայիսի 19-ի թիվ 4-Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի 2024թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝			
1.1 Լրիվ անվանումը	«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ		
1.2 Գտնվելու վայրը	Հայաստան Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/8,		
1.3 Պետական գրանցման համարը	222.160.930235		
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2016-10-10		
1.5 ՀՎՀՀ-ն	02653919		
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	010-59-40-50		
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://www.cld.am/		
1.8 Էլեկտրոնային փոստը	legislativecenter@moj.am / info@cld.am		
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		2.1	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		3.1	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		4.1	
Տիգրան Դադունց			
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը՝	64		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը			
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ			
8. Ֆինանսավորման աղբյուրները՝			
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը	8.4
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր	Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական	264,437,033	

	հետազոտությունների կենտրոնի գործունեությանը		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր	Աջակցություն «Օրենսդրության զարգացման կենտրոն» ծրագիր	62,870,594	
	Սնանկության գործերով կառավարիչների վերապատրաստում	1,400,752	
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		0	
9. Հիմնադրի ներդրումը՝			
9.1 Դրամական միջոցներ			
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը	9.2.3
10. Նվիրատվությունները/նվիրաբերությունները			
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք		
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը	10.3
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ			
10.1.2 Իրավաբանական անձինք			
10.1.3 Ֆիզիկական անձինք			
11. Իրականացված ծրագրերը՝			
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը		11.3
Արդարադատության նախարարության համար կամ նախարարության պահանջով՝ այլ մարմինների կարիքների համար օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարական փաստաթղթերի և այլ ակտերի նախագծերի մշակում, մասնակցության մշակմանը, վերլուծություն կամ	259,093,854		

փորձաքննություն	
Իրավական ակտերի մշակում, ոլորտային նախարարությունների, Հիմնադրամի թիմի կարողությունների զարգացում, վերապատրաստումների, դասընթացների կազմակերպում, խորհրդատվությունների տրամադրում, գնահատման և ուսուցման կարողությունների զարգացում, մշակվող իրավ ակտերի վերաբերյալ քննարկումների, միջ. կազմակերպում:	49,023,351
Վերապատրաստման դասընթացների մատուցում	792,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	308,909,205
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	308,909,205
Կից ներկայացվում է	
Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝	
Ֆայլի անուն	Էջերի քանակ

Հիմնադրամի տնօրեն

ստորագրությունը, անունը, ազգանունը

Հիմնադրամի ֆինանսատնտեսական հարցերով մասնագետ

ստորագրությունը, անունը, ազգանունը

»:

Անկախ աուդիտորական եզրակացություն

2024 թվական

«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն----------
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ----------
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն----------
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն----------
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն----------
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ----------

«ՊՐՈՖ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, ինչպես նաև նշված ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած

էական խեղաթյուրման հայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք հայտնաբերվել են իրականացված աուդիտի ընթացքում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը նաև այն մասին, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով՝ կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կարելի է:

Ղեկավարության հետ քննարկված բոլոր դիտարկումներից ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀՄՀ): Այդ խնդիրները ներկայացվել են աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելվում հրապարակայնորեն դրանց բացահայտումը կամ հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասներն ավելի մեծ կարող են լինել:

«ՊՐՈՖ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Տիգրան Հաչատրյան

ապրիլ 2024թ.
ք. Երևան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ըստ գործառույթների)

Հազար դրամ	ԾՆԹ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ շնորհներից և ձեռնարկատիրական գործունեությունից	4	263,232	220,872
Համախառն շահույթ (վնաս)		263,232	220,872
Իրացման ծախսեր		(14,350)	(342)
Վարչական ծախսեր	5	(297,086)	(283,573)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)		(48,204)	(63,043)
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	6	58,268	57,728
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ			57,728
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝			(50)
Գործառնական շահույթ (վնաս)		10,064	(5,365)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝		3,463	6,563
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ			6,563
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)		13,527	1,198
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը		13,527	1,198
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	7	(116)	(216)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		**13,411**	**983**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	ԾՆԹ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	9,452	4,606
Ոչ նյութական ակտիվներ	9	197	176
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**9,649**	**4,782**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	348	629
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	10	24	206
Տրված կանխավճարներ	10	207	-
Այլ դեբիտորական պարտքեր	10	6,560	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	43,226	19,799
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**50,366**	**20,634**
Ընդամենը ակտիվներ		**60,014**	**25,416**
Պարտավորություններ			
Կուտակված շահույթ		1,078	2,061
Ընդամենը սեփական կապիտալ		**1,078**	**2,061**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	8,933	4,320
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**8,933**	**4,320**
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	13	222	9
Ստացված ընթացիկ կանխավճարներ	13	41,796	14,941
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	13	6,403	4,085
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	13	1,582	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**50,003**	**19,035**
Ընդամենը պարտավորություններ		**60,014**	**25,416**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ		-	-	-
Տարվա շահույթ	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	1,078	1,078
Շահաբաժիններ	-	-	-	-
Պահուստային կապիտալի ավելացում/նվազում	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**	**1,078**	**1,078**
Տարվա շահույթ	-	-	983	983
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ			983	983
Շահաբաժիններ	-	-	-	-
Պահուստային կապիտալի ավելացում/նվազում	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**	**2,061**	**2,061**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**4,030**	**43,226**
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայություն-ների իրացումից	393,774	331,883
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	5,996	9,785
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**399,770**	**341,668**
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	1,518	1,322
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	47,584	59,989
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	250,263	240,036
Վճարումներ բյուջե	33,350	43,149
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	12,721	14,532
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	1,603	3,958
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**347,039**	**362,986**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	52,731	(21,317)
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	13,536	2,109
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	**13,536**	**2,109**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(13,536)	(2, 109)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	39,195	(23,426)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**43,226**	**19,799**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի N858-Ն որոշմամբ: Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծվել է 2016 թվականի հոկտեմբերի 10-ից՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի օգոստոսի 29-ի թիվ 5-Լ որոշմամբ վերանվանվել է և կանոնադրության մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն է:

Հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք), սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի գործունեության առարկան է՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական մարմինների հետ համատեղ հիմնադրամի կանոնադրական խնդիրներին վերաբերող ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը.

2) անհրաժեշտության դեպքում իր գործունեության մասին տեղեկությունների տրամադրումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ այլ պետական մարմիններին, միջազգային կամ հասարակական կազմակերպություններին.

3) իր ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունների գործունեության զարգացմանն ուղղված նյութական կամ խորհրդատվական աջակցությունը:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Վ. Սարգսյան 3/8, 0010:

1.1 Կառավարման համակարգ

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

2) հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝ հիմնադրամի տնօրենը:

Խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Ի պաշտոնե խորհրդի նախագահն է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Խորհրդի 2 անդամները նշանակվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից՝ Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմից: Խորհրդի մեկ անդամ նշանակվում է վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից և մեկ անդամ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմից:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից

Տնօրեն՝ ----------

Ֆինանսատնտեսական հարցերով մասնագետ՝ ----------

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) և այլ իրավական ակտերին համապատասխան:

2.2 Ճանաչման հիմքերը

ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ՝

- ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքի հիմունքով, և
- Պաշարների, որոնք ինքնարժեքով չափումից բացի չափվում են նաև իրացման զուտ արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

3. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

Ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՍ-ներ, որոնք դեռ չեն որդեգրվել:

Հրապարակված, բայց մինչև Հիմնադրամի կողմից ֆինանսական հաշվետվությունների հաստատումն ուժի մեջ չմտած ստանդարտները Հիմնադրամի նախնական գնահատականներով կիրառումն էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընդհանուր դրույթներ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը (այսուհետև՝ Հաշվապահական հաշվառման քաղաքականություն) մշակված է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում գործառնությունների, այլ իրադարձությունների կամ իրավիճակների վերաբերյալ մոտեցումների բացակայության դեպքում Հիմնադրամը սահմանում է քաղաքականությունն ինքնուրույնաբար:

4.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում սկզբնական արժեքով: Հետագայում հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած հետագա մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստում ներառված գումարները փոխանցվում են կուտակված շահույթին:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Բոլոր այլ ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են ամորտիզացիոն նվազագույն ժամկետները.

Շենք, շինություններ	20
Մեքենաներ և սարքավորումներ	8
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1
Տրանսպորտային միջոցներ	8
Փոքրարժեք հիմնական միջոցներ	1
Այլ հիմնական միջոցներ	8
Արտադրական սարքավորումներ	5
Ոչ նյութական ակտիվներ	10

4.2 Ոչ նյութական ակտիվներ

Հիմնադրամի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն

օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Հիմնադրամի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

Ամորտիզացվող գումարը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարը բաժանելով օգտակար ծառայության ժամկետի վրա:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ սկսած այն պահից, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

4.3. Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

4.4 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքները ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Հիմնադրամը վարկերը և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից

առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Հիմնադրամն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հիմնադրամը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներին է դասում վարկերը և դեբիտորական պարտքերը:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը հանած արժեզրկումից կորուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքերը ներառում են ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքերը ու դրամական միջոցները, և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

Ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Հիմնադրամը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների կազմում: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով,

իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրանց փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

4.5 Արժեզրկում

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Հիմնադրամի վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Հիմնադրամն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ակտիվների գծով ձախողումների կամ արժեթղթի համար գործող շուկայի վերացման հետ:

4.5 Պետական շնորհներ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց:

Պետական շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը, որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Հիմնադրամը պետական շնորհները հաշվառում է հիմք ընդունելով եկամտային մոտեցումը, ըստ որի պետական շնորհները պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում

սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում կազմակերպությունը, որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված է շնորհը:

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ոչ դրամային ձևով ստացված պետական շնորհները հաշվառվում են իրական արժեքով:

4.6 Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Հիմնադրամը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն

չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

4.7 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

4.8 Հասույթ

Գործունեության ընթացքում ծառայությունների մատուցումից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Գնորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը չափվում է հատուցման այն գումարով, որը Հիմնադրամը ակնկալում է ստանալ խոստացված ծառայությունների փոխանցման դիմաց:

Իր սովորական գործունեության ընթացքում Հիմնադրամն իրականացնում է այլ գործառնություններ, որոնք չեն առաջացնում հասույթ, սակայն ուղեկցում են հասույթներ առաջացնող հիմնական գործունեություններին: Այդպիսի գործառնությունների կամ այլ դեպքերի և իրադարձությունների արդյունքները Հիմնադրամը ներկայացնում է՝ հաշվանցելով ցանկացած եկամուտը նույն գործառնության կամ այլ դեպքի և իրադարձության արդյունքում առաջացած համապատասխան ծախսերի դիմաց:

Հիմնադրամը պետք է ճանաչի հասույթ, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում է պայմանագրային պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Այն պայմանագրերի համար գործարքի գինը որոշելիս, որոնց համաձայն գնորդը խոստանում է հատուցում ոչ դրամական հատուցման ձևով, Հիմնադրամը պետք է ոչ դրամական հատուցումը (կամ ոչ դրամական հատուցման խոստումը) չափի իրական արժեքով:

5. Եկամուտ շնորհներից և ձեռնարկատիրական գործունեությունից

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արդարադատության նախարարություն	263,232	219,704
Դրամաշնորհ (USAID)	36,886	57,728
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	12,450	-
Ձեռնարկատիրական գործունեությունից	-	1,167
Ընդամենը	**312,568**	**278,599**

6. Աշխատակիցներին հատուցումներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	191,213	182,675
Եկամտային հարկ	52,167	49,663
Սոցիալական ապահովագրության վճարներ	14,105	12,950
Այլ պարտադիր վճարներ	3,294	3,031
Ընդամենը	**260,779**	**248,319**

7. Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրանսպորտային ծախսեր	456	318
Բանկային ծախսեր	-	20
Այլ վարչական ծախսեր	8,035	14,142
Այլ ծախսեր	3,319	1,197
Ընդամենը	**11,810**	**15,677**

8. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	116	216
Հետաձգված հարկ	(2,952)	-

Ընդամենը	**(2,836)**	**216**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)**	**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)**
Շահույթից մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(15,266)		1,198	
Շահութահարկ 18% դրույքաչափ	(2,748)	18%	216	18%
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր	(88)	1%	-	-
Շահութահարկի գծով ծախսեր	(2,836)	19%	216	18%

9. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**Ավելացում**	**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Մեքենաներ և սարքավորումներ			
Հաշվեկշռային արժեք	7 892,8	(5 352,3)	2 540,5
Արժեք	11 742,0	1 342,0	13 084,0
Կուտակված մաշվածություն	3 849,2	6 694,3	10 543,5
Այլ հիմնական միջոցներ			
Հաշվեկշռային արժեք	1 559,7	505,8	2 065,6
Արժեք	1 615,6	740,5	2 356,1
Կուտակված մաշվածություն	55,9	234,7	290,6
Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ			
Հաշվեկշռային արժեք	9 452,5	(4 846,5)	4 606,0
Արժեք	13 357,6	2 082,5	15 440,1
Կուտակված մաշվածություն	3 905,1	6 929,0	10 834,1
Ընդամենը հիմնական միջոցներ			
Հաշվեկշռային արժեք	9 452,5	(4 846,5)	4 606,0
Արժեք	13 357,6	2 082,5	15 440,1
Կուտակված մաշվածություն	3 905,1	6 929,0	10 834,1
Կուտակված արժեզրկում			

10. Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հումք նյութեր	222	94
Այլ նյութեր	126	535
Ընդամենը	**348**	**629**

11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	
Տրված կանխավճարներ	208	-
Պետական բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքեր	24	206
Այլ դեբիտորական պարտքեր	6,560	-
Ընդամենը	**6,792**	**206**

12. Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կանխիկ միջոցներ	-	-
Բանկային հաշիվներ	43,226	19,799
Դրամական միջոցներ ճանապարհին	-	-
Ընդամենը	**43,226**	**19,799**

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի	2024թ. դեկտեմբերի

	31-ին ավարտված տարի	31-ին ավարտված տարի
Առևտրային կրեդիտորական պարտքեր	222	9
Ստացված կանխավճարներ	41,796	14,941
Պետական բյուջեի նկատմամբ կրեդիտորական պարտքեր	7,986	4,085
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-
Ընդամենը	**50,004**	**19,035**

14. Հաշվեկշռային իրադարձություններ

Հաշվետու ամսաթվից հետո չի եղել այնպիսի իրադարձություն, որը կարող է հանգեցնել ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման այս ֆինանսական հաշվետվությունում:

15. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող այն իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում կարող են համարվել ընդունելի:

16. Ֆինանսական գործիքներ

16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Հիմնադրամի ֆինանսական գործիքների վերաբերյալ՝ ներառյալ.

- Ֆինանսական գործիքի յուրաքանչյուր տեսակի գծով յուրօրինակ տեղեկատվություն
- Ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման գծով տեղեկատվություն, ներառյալ դատողությունները և գնահատումների անորոշությունները:

17. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այդ ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև.

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝արտարժութային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և հետևաբար ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահատված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժույթային ռիսկի՝էական չեն:

Հիմնադրամի գործառնական արդյունքի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ դոլարի փոխարժեքի տատանումները:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտականությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է , որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

18. Կապիտալի ռիսկի կառավարում

Հիմնադրամն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը:

Հիմնադրամի ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը(զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա):

Ստորև ներկայացվում է հաշվետու ամսաթվերի դրությամբ Հիմնադրամի պարտքի և կապիտալի հարաբերակցությունը.

Հազար դրամ	2023թ.	2024թ.
Ընդամենը պարտավորություններ	58,936	23,355
Հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները	43,226	19.799
Զուտ պարտքը	15,710	3,556
Ընդհանուր կապիտալ	1,078	2,061
Կապիտալի և պարտքի հարաբերակցությունը	**0,07**	**(0,58)**

17.1 Ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	**2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-		-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,799	19,799	-	-
	19,799	**19,799**	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա

Նկարագրություն	2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14,950	14,950	-	-
	14,950	**14,950**	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	**2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,560	6,560		-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,226	43,226	-	-
	49,786	**49,786**	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա

Նկարագրություն	2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42,018	42,018	-	-
	42,018	**42,018**	**-**	**-**

19. Պայմանականություններ

19.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և հետևաբար առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ

չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

19.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Հիմնադրամը գործում է, չի պահանջում, որպեսզի Հիմնադրամը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված ՀՀ կառավարության պահանջները և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

19.4 Գործարքներ ղեկավարության և նրա անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Աշխատավարձ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	41,090	44,380
	41,090	**44,380**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.06.2025 15:18